

նոր բացուած ճամբայ և զուտ մը, որուն վրայ գրուած կայ, արաբերէն ԲՈՂՈՒՔԱԿԱՆԱՅ ԳԵՐԵՉՄԱՆԱՏՈՒՆ : Հիւսիսէն՝ պողոտայ որ կը տանի Հրէից փակուած գերեզմանատունը :

Առաջին մասին արեւելեան ճակատին վրայ, որ հանրակառքի պողոտան է, տարիներ առաջ չինուեցաւ ելեքաբարկան 11 րդ բոսղը, իսկ 41 տարի յառաջ չինուած է երկու սենեակնոց տուն մը, ուր կը բնակի Յոյն ընտանիք մը : Երկրորդ և երրորդ մասերուն մէջ ալ 1894 ին չինուած պահակներու յատուկ սենեակներ կան : Երկրորդին մէջ, 1921 ին կաթովիկ Երիտասարդաց համար իբր հաւաքատեղի չինուեցաւ « Քրիստոնէական Վարդապետութեան » ակումբը : Երրորդ մասին մէջ, արեւելեան կողմը, պողոտային վրայ, չինուած կայ երկու սենեակնոց տուն մը, ուր կը նստի Յոյն-կաթովիկ պահակ ընտանիք մը : Իսկ այս մասին հարաւային կողմը, չինուած կայ նաև երկրորդ տուն մը, ուր Մարօնիթ ընտանիք մը իբր պահակ կը նստի : Զարմանալի է որ Հայոց և Հայ կաթովիկներու համար, առանձին պահակատուն չէ նշանակուած, հակառակ անոր որ, սկիզբէն ի վեր Հայերը, քրիստոնէից ընդհանուր թիւին մէջ երկրորդ տեղը կը գրաւէին :

Գերեզմանատանց վերոյիշեալ երեք մասերու առաջինը ունի 5900 քառ. մէթր տարածութիւն : Հո՛ս թաղուածներու մեծամասնութիւնը Հայեր են : Երկրորդ մասը ունի 18,600 քառ. մէթր տարածութիւն, հո՛ս ալ թաղուած Հայեր կան, մասնաւորաբար արեւմտեան տարածութեան վրայ, իբր անմիջական կցորդ ազգապատկան արաբերու (Մէչնապա) : Ազգ. Առաջնորդարանը այս երկու մասերուն ազգային սեպհականութիւն ըլլալու պնդումով, թէ՛ մասնաւոր և բացառիկ Ատեաններու առջև և թէ տեղական Վերաքննիչ ատեանի և Պատն գատարանի առջև գատ վարեց :

Երրորդ մասը ունի 12,100 քառ. մէթր տարածութիւն : Ասոր արեւել.

հիւս. կողմը թաղուած Հայերու գերեզմաններ կան : Այս մասին համար ալ Ազգ. Առաջնորդարանը վերոյիշեալ դատարաններուն առջև յայտնեց որ ան կը պատկանի Հայոց, Յունաց, Ասորոց և Մարօնիթներու :

Ինչպէս կանխեցինք ըսելու, այս երեք մասերուն մէջ այլևս ննջեցեալ չի՛ թաղուիր : Յայտնի չէ թէ Ազիզիէի ներկայ Գերեզմանատներէն յառաջ, Հալէպի քրիստոնէաները իրենց մեռելները թաղելու համար ուրիշ տեղ ունեցնոր են թէ ոչ : Ազիզիէէն առաջ Հալէպի Հայոց գերեզմանատուն ծառայած է, անկասկած, Ս. Քառասնից և Ս. Աստուածածին եկեղեցիներու շրջափայլը, ինչպէս որ հնագոյն Հայ գերեզմանոցները գտնուած են եկեղեցիներու շուրջը : Անհաւանական չէ ենթադրել որ բուն հին քաղաքին մէջ հաստատուող քրիստոնէաներ, այժմու Սալիպէ ու Ճիտէյտէ թաղերը բնակելէն յառաջ, ԺՅ—ԺԳ դարերուն ունեցած են աւելի հնագոյն գերեզմանատուն մը, որ այժմ անյայտ է : Ծատ կը ցաւիմ որ զբաղումներս թոյլատու չեղան քննութիւններս ա՛լ աւելի խորացնելու :

Մեր տեսած վաւերաթուղթերէն կը հասկցուի որ հինէն իվեր, այս երեք բաժինները քրիստոնէից սեպհական գերեզմանոցներ եղած են 1579 էն ապին, և որոնց նախնական սեպհականատէրը եղած է Սէֆիթ, որդի՛ ԻՍԿէնՏէՐ ՆԱՍՐՈՒՆԻ, որ Հալէպի ԻԶԶ ԱՄՈՒՐԻ նահիյէի ՍԱՐՍ ՄէՉՄԱՍԻ մէջ ունեցած և 500 թղենի պարունակող իր պարտէզը փոխանակած է Հալէպի ՊէՇ ԳՈՒՊՊէ մզկիթին վազձի կողմ պարտէզին հետ, որ կը գտնուէր ՊԱՊ ԷՂ ՆԱՍՐԻ դուրսը, Բերիոյ ՀէՉՉԱՉԷի մօտերը : Այս պարտէզը ունեցած է պողատու և ոչ պղտու ծառեր, պարսպապատ եղած է և մէջը հինցած ջրանիւ մը ունեցած է, աւազանով :

Վերոյիշեալ ՊէՇ ԳՈՒՊՊէ մզկիթի վազձիին միւրեմիլին եղած է Հալէպի մէջ, ՊԱՍՈՒՐԻ ԶԱՏԷ մականունով հանրածանօթ ՀԱՃԻ ՀԻՒՍԷՅՆԻ որդի՛